կի մէջ զօր. Բրոուտի անմիջական հսկողութեան տակ։ Այդ առաջարկը գործնական է եւ ոչ քաղաքական։ Երկաթուղիները դտնուում են ամենասերտ կապակցութեան մէջ ելեւմտական հարցերի հետ, եւ Դաշնակիցները գործ չեն ունենայ Անդրկովկասի ելեւմտական գործերի հետ, քանի երկաթուղիների վիճակը բարելաւուած չէ»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Զօր. Բրոուտը եղաւ իմ մօտս, եւ մենք խօսեցինք նրա հետ այդ հարցի մասին։ Ես սկզբունքով համաձայնուեցի Անդրկովկասեան բոլոր երկաթուղիների միացման խնդրին։ Հարկաւոր է միայն մշակել մանրամասնութիւնները։ Զօր. Բրոուտը սիրայօժար կերպով խոստացաւ ներկայացնել ինձ իր կարծիքները մասնաւորապէս վրաց երկաթուղիների բարելաւման մասին։ Ես արդէն առաջարկել եմ հաղորդակցութեան նախարարին կազմել համապատասխան զեկուցում, բայց եթէ զօր. Բրոուտը ուղարկէ իր զեկուցումը, մենք կը լինինք խիստ երախտապարտ։ Երկաթուղային տնտեսութեան բարելաւման հարցում Վրաստանի կառավարութիւնը ինքն էլ շահագրգռուած է»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ես ուզում էի նախազգուշացնել ձեզ, որ զօր. Բրոուտի ծրագիրը կը լինի ամենից աւելի չեզոք մի ծրագիր եւ այդ պատճառով ամենից աւելի ընդունելի թէ Վրաստանի եւ թէ Հայաստանի ու Ադրբէջանի համար։ Ես խիստ ցաւում եմ, որ պարտաւորուած եմ չօշափել այն հարցը, որը յիշւում է այստեղ։ Ես ուզում եմ հարցնել Վրաստանի կառավարութեան, թէ ի՞նչ է նրա քաղաքականութիւնը Անգլիայի եւ Դաշնակիցների վերաբերմամբ։ Ձեր առաջուան հարցին ես պատասխանում եմ ձեզ՝ հարցով։ Իմ կարճատեւ բացակայութեան ընթացքին այստեղ ամէն բան փոխուել է։ Վրաստանը կանգնած է անորոշութեան առջեւ, եւ նրա զեկավարների քաղաքականութիւնից կախուած է ամէն ինչ։ Դուք դիտէք Լոնդոնից ստացուած հեռագիրը։ Այդ միակ հեռագիրն է՝ ուղղուած նորակազմ երիտասարդ պետութիւններին։ Վրաստանը գնում է ինքնուրոյնութեան ուղիով այնպիսի մի հզօր օժանդակութեամբ, որպիսին Մեծ-Բրիտանիան է, եւ ես չեմ ուզում, որ Վրաստանը նրանից հրաժարուի։ Ես դիւանագէտ չեմ, այլ պարզ զինուոր եւ կ՝առաջարկեմ պարզ սրտով պատասխանել ինձ մէկ հարցումի. արդեօ՞ք Վրաստանը անկեղծ կողմնակից է Անգլիայի»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Ես կառավարութեան նախագահն եմ եւ նորից կրկնում եմ ձեզ, որ իմ ամբողջ գործունէութիւնը — պետ. ու հրապարակախօսական — ուղղուած է եղել Անգլիային եւ Ֆրանսային ի նպաստ։ Կրկնում եմ, որ իմ համակրանքները չեն փոխուել ոչ պատերազմի ընթացքին, ոչ այժմ։ Իսկ ինչ վերաբերում է արտաքին գործոց նախարարին, մեր արտաքին քաղաքականութեան զեկավարին, նրա գործունէութիւնն ու հայեացքները, իբրեւ Դաշնակիցների ամենաանկեղծ կուսակցի, երբեք եւ ոչ ոքի կողմից չեն ծածկուել եւ ամենքին լաւ յայտնի են։ Այնպէս որ այս հարցում չի կարող լինել եւ ոչ մի կասկած։ Միայն, տեղի ունեցող դէպքերի կապակցութեամբ ժողովուրդը կարող էր կասկածել. ճի՞շդ է արդեօք մեր որդեգրած վարքագիծը եւ անվերապահ վստահութիւնը անգլիական բարձր հրամանատարութեան»։

ԳԵԳԵՁԿՈՐԻ. «Ձեր բանակցութեան միջոցին, զօրավար, ես խօսել եմ զօր. Բիչի հետ այն մասին, որ մենք, Վրաստանը, ամբողջապէս գնում ենք Անգլիայի հետ ամենասերտ միութիւն հաստատելու ճանապարհով։ Ես ասում էի, թէ մենք սպասում ենք այդ միութեան գործնական հետեւանքներին, բայց վերջին հարցը՝ Կամաւորական բանակի յառաջխաղացումը խախտեց մեր վստահութիւնը»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Մի՞թէ այդ միութիւնը դնահատւում է միայն այն տեսակէտից, թէ որքան գործնականապէս պիտի օգնենք ձեզ»։

ԳԵԳԵՁԿՈՐԻ. «Ո՛չ, բայց մենք ունինք իրար կապող շահեր, օրինակ, ես խօսել եմ զօր. Բիչին ելեւմտական, պարենաւորման, արդիւնաբերական ու երկաթուղային հարցերի մասին։ Ես հարցը դրի ուղիղ. մենք ինչի՞ վրայ կարող ենք յոյս դնել Անգլիայի կողմից»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ես արդէն դարձրել եմ ձեր ուշադրութիւնը ձեր հանրապետութեան ելեւմտական վիճակի վրայ, բայց նա ամենասերտ կերպով կապուած է երկաթուղային գործի հետ, որովհետեւ Անգլիան չի կարող դրամ